

ՏՐԱՊԻՉՈՆԻ ՀԱՅ ԴԻՒՂԱՑՈՒ ԿԵԱՆՔԻ

Զ.

Բ Ա Տ Ա Խ ի ծ ա ռ ե ր .

Գիւղացին կաղնուաթը լաւ սարքեց, ապահով վիճակի մէջ զբաւ, այս անգամ ձեռք զարկաւ զանազան մրգեղենի ծառեր տնկել. որի պտուղը թէ տան պիտոյքի համար պիտի գործածէր իբրև ուտելիք և թէ աւելորդը վաճառէր:

Նա գիտէր որ այն տարին երբ կաղենը առատ պտուղ չարտադրեր, մրգեղենի ծառերէն գոնէ քանի տեսակները առատ պտուղ պիտի տային, որով իր մասնաւոր պէտքերն պիտի հոգացուէր: Նա սկսաւ 12—20 տեսակ ծառեր տնկել տան շուրջը: Կաղնուաթի մէջ և շրջապատները տեղտեղ տնկեց այն պաղատու ծառերն, որ շատ չեն բարձրանար, իբենց շուքերով կաղնուաթի աճելուն արգելք դառնար:

Իսկ շատ բարձրացող տերեւախիտ ծառներն աւելի տան շուրջը կամ կաղնուաթէն հեռի առանձին վայր կը տնկեն և կամ յատուկ վայրեր կորոշեն մի տեսակ ծառերէն 10—20—30 հատ մի տեղ տնկելու համար: Այս տեսակ ծառաստանը ուտ մասնիկով կը կոչուի. որպիսին է տանձուտ, ծուաղնուտ, բալընուտ, ընկղընուտ: կաղնուաթ և այլն:

Նոյնպէս նաև ուտ մասնիկով կը վերջանայ անտառի մէջ իրար մօտ աճած միատեսակ ծառերն. ինչպէս են կուընուտ, թեղուտ, մօնուտ, պցխուտ, աժրուտ, լօրուտ և այլն:

Ծուաղնին կամ ծուաղնուաթը աղբոտ վայր կը ոիրէ, գորա համար ևս տան շուրջը և կամ կունդուռը գիգուած կուղինոցին կից կը տնկեն: Սա միջին աստիճանի ծառ կը լինի, ուղղահայեաց չբարձրանար. վշշատի պէս ծուռ ու մուռ, արմատի մօտէն քանի բաժանումներ կունենայ, բունը սև, տերեւախիտ, ամառ, ձմեռ կանաչ է տերեւները, որ լիմոնի տերեւի լայնութեամբ և նորա երկու երկարութեամբ ու բուգ ծայրով և աւելի թանձր:

Ծուաղնին խաղաղի ողկոյզի չափ կարմիր կամ սև ողկոյզ կտայ, հատերը բոլորովին նման կեռասի հատերուն, սակայն կեռասի նման երկար կոթ չունի. այլ աննշան մի կոթով կալած են բունին, իրար վըայ ամրապինդ խտացած, որպէս լազուտի հասկը—գլուխը, և իսկապէս լազտի գլխի ձև առած է:

Խաղողի ողկոյզի երկարութեամբ շիւղի մի շուրջը նախ սպիտակ ծաղիկներ դուրս կտայ, ուստի կը գոյանան կանանչ հատեր, երբ հասնելու մօտ է, կը կարմրի, ապա կը ուսանայ: Հատերը կեռասի ձև և կորիզ ունին, սակայն ջրոտ չեն, այլ միսը թանձը և փոքր ինչ դառնահամ քաղցրութիւն ունի:

Հասածը կուտեն, ընդհանրապէս փռան մէջ ողկոյզները կը չորացնեն. հատերը ձմեռը կեփին, կուտեն: Փանի հասած չէ, շատ դառն է:

Ըստանի ծուաղնին պատուաստը չեմ տեսած, այլ արմատի մօտ ըուսած տունկերը արմատահան անելով ուրիշ տեղեր կը տնկեն: Իոկ անտառներու մէջ աճած ծուաղնին թէ և աւելի մանը պտուղ կտայ, սակայն աւելի քաղցր ու համեղ է:

Եթե չիր գիւղացիք առ հասարակ կը գործածեն, ինչպէս երեանայ նահանգին մէջ ծիրանի շիրը:

Ըսկզբնուան ես արդիւնաւոր է ծըապիզօնի գիւղացիներու համար, այս ծառը շատ կը հաստանայ, հսկայ ճիւղերը կը տարածէ իր շուրջը, առատ ընկոյզ կտայ: Ունի քանի տեսակները, լաւը գիւղութեամբ կը կոտրի, այնպէս որ երկու ընկոյզ մի ձեռքի մէջ իրաք հետ սեղմելով կը կոտրի, մեծ և միջուկը միք կը լինի:

Ըսկզբնի պատուաստը չեմ տեսած, գիւղացին տեսակը լաւացնելու համար քանի անգամ իր տեղը պիտի փոխէ: Սորա տերեւները լայն ու մեծ են, բարակ և դառն, անասունք չեն ուտեր:

Այս ծառի տախտակը շատ յարդի ու թանկագին է, երբ յզկուին, վրան կը յայտնուին ընական նկարներ, որ ներարկուած էն շուրջը գանուող բոյսերէ:

Սորա ըունի վրայ—արմատի մօտ կը գոյանայ ուռեցքներ, որ տեղացիք ուռ կասեն, ուռը տարուէ տարի կը մեծանայ, հին ծառերու վրայ մինչև 50—60—80 վութ կշռող ուռեր կան: Ուռի վաճառականութիւնը քանի տարի առաջ մեծ կարեսորութիւն ստացած էր, խումբ-խումբ ուռնիներ գիւղէ գիւղ և հեռու տեղեր գնալով լաւ տեսակ ուռ ունեցող ծառերու մեծ գին կտային, միայն ուռը կարելով կը տանէին քաղաք մեծ ծախքով, ուստի նւրոպա:

Լաւ տեսակ ուռը նւրոպայի մէջ քանի հազար ֆրանք արժածէ, քանի քանի հայ առեւտրականներ յանկարծ հարստացած են, իոկ լաւ տեսակը չճանաչողներն ես սնանկացած:

Այս ուռէն նւրոպայի մէջ թիթեղի բարակութեամբ տախտակներ կը քաշեն, փայտեղէն կահերթու վրայ կը փակցնեն, իոկ

Տրապիզոնի մէջ փոքր ինչ կարգին աներու ամեն վայտեղին կահերն ընկղենի ծառի տախտակէ շինուած են, որպէս աթոռներ, դսառեղաններ, գրադարաններ, սնտուկներ, լուսամուտներու շրջանակներ, վեղկեր, ոենեկի ու դարակի գաներ և լուսն. ամենն ևս յղկուած ու չնարակուած:

Կարգին աներու յատակի ու ցեղունի տախտակամածները ընկղեններ և մաշմարդի տախտակներէ շինուած են. այս երկու տեսակ տախտակներու մէջ մլուկներ չեն գոյանար:

Ընկոյզն երկու պատեաններու մէջ կը գոյանայ. առաջին պատեան է դալափան, որ կանաչ ու թանձր և խիստ գառնէ, որը պատած է ընկոյզի շուրջը, երկորդը կիեղին (կեղան), որ ինչպէս գիտենք, կարծր է, որուն մէջ կը պարունակէ չուս շերտ միջուկը ըստ տեղացոց կանծին կամ կտօնը:

Երբ գեռ հասած չէ, դալափան միացած է կճեպին հետ, իոկ երբ հասաւ, կեղենէն կը բարենուի, քանի տեղէն կը ճեղքուի. միջէն ընկոյզը ցած կը սկսի, կամ միտոին երբ գետին ընկնին՝ ճեղքը կը բաժանուի, ընկոյզը դուրս կը սկսի ճատ ան գամ ընկնելուն չեն նայեր, ծառը թափ կտան, կամ խուրչուկով ճեռուն գտնուած ընկոյզներուն հարուած կտան և կը թափեն գետին, կը հաւաքեն. եթէ դալափան հասած չէ, քանի օք արեգակի տակ կը փուեն, ապա կը բաժանեն զալափայէն, կը լեցնեն սարպինի մէջ, կամ կը խառնեն տան համար պատրաստուած ուաելու կաղինին: Ընկուզի կանծին, որպէս եռ կաղինին ծեծելով կը խառնեն արմայէ ապուրի մէջ պաս օրերը:

Դալափան շատ անգամ կեփեն, իբրև ներկ սպիտակ կտաններ մէջը կը թաթախեն, որը ունի բաց ու գոյն:

Աշնան տերեւաթափի միջոցին ագռաւներն ու նղայտները խումբ խումբ այս ծառերու տակնուզիւան կը հաւաքուին, այս այն ճիւղերու վրաց մնացած ընկոյզները կը հաւաքեն, կտուցի մէջ բռնելով յարմար վայր կը տանեն, կը դիղեն, երբ անօթի վնեն, կտուցի մի կողմ կը ծակեն, միջուկը կտաւեն:

Բալընուածն, որ կեռառենի ծառերէ բաղկացած է, կարեւ է դիւղացուն. թէ ծառը շատ կը մեծանայ, թէ տռառ պտուղ կտայ և թէ ճիւղերը յոտելով տերեւները ոնորանոց կը կերցնեն, ծառէն ևս գերան ու տախտակ կը շինեն:

Պտուղը կուտեն, մի մասն ևս կը չորացնեն. ձմրան կաղինին հետ կոմ տռանձին կուտեն. հարկ եղած միջոցին ճիռլ կամ շալակով քաղաք կը տանեն վաճառելու:

Իւրաքանչիւր տռւն ունի իր բալընին կամ բալընուար, բացի տռէ աթռողջ գիւղին յատուկ բալընուար կայ, ուրը մեծաւ

մասամբ ճանապարհի վրայ է, ուստի անցնող ու դարձող յոգ-նած ճանապարհորդները ու տե՛ն, կաև այն գիւղացի աղքատ-ները, որ չունին, օդառնին ատելէ, որ բարեգործական նպատա-կաւ անկուած է:

Այս ժառի պառզին հայ գիւղացիք բար կսուն, որ բառ ելեանցոց գիւղաս, իսկ իրեանցիք բար կասեն ֆիշնացին, որ կե-ռասի վայրենին է և թթու, ժառն ևս չմեծանար:

Այս ժառի բունը կանանց կեղեսով պատաժ է, կեղենին վրայ ևս սպիտակ կարմիր գունով բարակ՝ սակայն պինդ խաւ պատաժ, այս խաւը չէ թողութ ժառը հաստանայ, սոքա հա-մար գիւղացիք խաւը վերէն վայր կը գծեն գանակով, որով օր առուը կը մեծանայ:

Մաշմրդնուտն շագանակենիի ժառերէ բազկացած է, մեծ անտառներու յառուկ է, ուր կը դանուին իրար մօտ մեծամեծ իշխաբոյս մաշմրդի ժառեր, որ մաշմրդ (շագանակ) կան մեծ քանակութեամբ, սակայն մեծ մասամբ հաւաքող չկինելուն զազեներու մէջ անձրեսի և ձեան տակ կը միշտանա:

Պատուաստուած ընտանի մաշմրդնին աւելի հասաւ մեծ ժառ կը լինի, հաստ ճկուդեր կարծակէ, խոշոր մաշմրդու կտույ-քնկոյզի շափ կամ քիչ աւելի մեծ:

Մաշմրդին, որպէս ընկզենին՝ շատ չքարծրանար, բունը հաստ և սակայն 5—6 կանգուն բարձրութեան վրայ մեծ մեծ ձիւդեր կարծակէ. կարծը ու դիմացկուն վայս ունի, տերեներն ես լայն ու մեծ՝ ընկզենիի տերեւի նման, սակայն շատ բարակ, անասունք կուտենա:

Այս ժառի տերեները ամեն մի անուոր կը թերդէ (տերե-ները մի մի հատ շեւլի վրայէն հանել), թելի մը վրայ շարան կանէ, կը ըորացնէ մեծ քանակութեամբ. երբ հաց պիտի թիսեն, եւրաքանչեւր շարան թրչոց կը դնեն, հատ հատ թիտակի վրայ կը շարեն, մի գունդ խմոր վրան կը դնեն, կը ձգեն փռան մէջ, որ խմորի տակը չմօխրուտի. նաև նոյն խմորի գնդին, որ փռու-նիս կասեն, երբ փռան մի կողմ զետեղուած կրակին մօտ կը դրուի, կրակի կողմի երեսին կը միակցնէն և—2 մաշմրդի տե-րե, որ կը ակը փուռնիտի երեսը շայրէն:

Մաշմրդի պտուզն ևս պատաժ է. կանանց պատեանով որպէս ընկուզինը, սակայն ընկուզի դպրավայի պէս երկար ածեւ չէ, այլ բոլորովին կլոր, պատեանը աւելի կարծը և շշապատը իմիտ առ խիտ պատաժ է առզանման վշեցով, որին թօլ կասեն: Այս թօլին մէջ կը պարունակէ կողք կողքի կպած երկաւ մաշ-մրդ գներ, մի կողմ տակակ, միւս կողմ կլոր (արգէն կողք

կողքի թօլի մէջ կլոր ձև կառնեն): Մաշմուրգն ևս պատաժ է կաշի պէս ճկուն կակուդ—ու կարմիր և փայլուն պատեանով:

Մաշմրգի միբոր թափելու համար չեն թոթուեր, այլ երբ թօլը կը հասունայ, կը ճեղքուի, հետզհետէ կը բացուի, կերպին շեկագոյն մաշմուրգները և ապա միջէն գուրս գալով կը թափին ցած, գիւղացին ամեն առաւօտ կերթայ, ծառի տակէն կը հաւաքէ:

Քանի որ մաշմուրգն փշոտ թօլի մէջ է, անվտանգ է, երբ անյարմար կամ խոնաւ տեղ դրուի. իւրաքանչիւրի մէջ որդեր կը գոյանան, գորա համար դետինը կը փորեն, կը հորեն, վրան հող կամ մոխիր կը լեցնեն. կան մարդիկ, որ թօլերն գեռ չճեղքուած կը թոթուեն. այնպէս կը պահեն, երբ միջոց ունենան, համերը կը հանեն, քաղաք կը տանեն վաճառելու:

Մաշմուրգը թէ հում և թէ բոված կուտեն, բովածը շատ համեղ է. կլոր կողմը կը քերծեն գանակով, կը գնեն մոխրաւ խառն կրակի մէջ, կանթեղեն. երեսի քերծուածքը կը բացուի, միջուկը կը կարմրի. կեղեքը մի կողմ կը ձգեն, կուտեն: Քաղաք տեղերն ևս նոյնպէս կը քերծեն, երկաթեայ ափսէի մէջ կը շարեն, փուռը կը դնեն, ապա տաք տաք կը վաճառեն, ուսը մեծ քանակութեամբ կսպառի: Եթէ երեսը առանց քերծելու կրակի կամ փուան մէջ դնեն, քանի վայրկեան յետոյ սաստիկ կը պայթի, միջուկը ամեն կողմ կը սփռուի, եթէ կրակի մէջ է, կրակն ու մոխրը կը սփռէ տան ամեն կողմ. մարդու աշք, քիթ ու բերան կրակով մոխրով կը լեցնէ: Այդպիսի ժամանակ կրակին գգուշութեամբ կը մօտենան: Եթէ դանակ չեղաւ մէկուն մօտ, ատամով մաշմրգին մի կողմ կը կծէ, կը ծակէ, որպէս զի այն ծակէն օդը դուրս դայ, չպայթի: Դորա համար իսկ «կրակէն մաշմուրը հօնիս կունի» առածը հնարուած է:

Տանձուտ.—Տանձենին ևս միջակ ծառ է. աւելի մեծ կը լինի խնձորենիէն, հաստ ճիւղեր կարձակէ, թէ բունը և թէ ճիւղերը մաշմրգին չեն հասնիր: Ամեն տուն ունի տանձենին. իսկ հարուստները ունեն տանձուտ, պտուղը թէ կուտեն, թէ կը վաճառեն և թէ չորացնելով չեր կը շինեն, ձմրան եփելու ու տելու համար: Այս կերակուրին խուաւ կատեն:

Տանձենին ևս ունի շատ տեսակներ, որ կին մասնիկով կը վերջանայ, որպէս են մեղքեկէն, փայչէն, թթմկէն ևն. ևն նաև կապ մասնիկով, որպէս է ըղիկապ ևն: Խնձորնուտ բառը չեմ լսած և ոչ իսկ տեսած, թէ և կան շատ տեսակ խնձորենիներ, որ առանձին առանձին տնկուած են տան շուրջը, կաղնուտի թէ միջավայրերը և թէ եղերքները, եղ-

բեմն ևս տանձենիներու հետ խառն։ Խնձորենին շատ չքար ծրաւ նար, տերևներն ևս խիտ չեն, շուքը շրջակայ թռւփերու վրայ այնչափ չաղղեր։ դորա համար իսկ ամեն տեղ կը տնկեն, մինչդեռ կան կարգ մի ծառեր, որոց շուքը տակ ոչ թէ թռւփ, այլ խոտ անդամ չ'աճիր, որպեսիներն են թթենին, թզենին, թեղին, մաշմրգին, ծուաղնին, խողկաղնին, նամանաւանդ ընկզենին են։ Խնձորն ևս տանձի պէս թէ կուտեն, թէ կը վաճառեն և թէ չորացնելով չիր կը շինեն։ Խնձորը մի տարի կարելի է սարւ բինի մէջ անվնաս պահել։

Խնձորենին ու տանձենին շատ անդամ իրար կը պատռւառաւուեն, երբեմն վայրենիի ըռւնի մի կողմը տանձենի, միւս կողմ խնձորենի կը պատռւառաւուեն։ Երբեմն տանձենին խնձորենու կամ խնձորենին տանձենու վրայ կը սկառուաստեն, առաջինը լաւ չաճիր։ պատռւաստած ընտանի տոնձենին կը հաստանայ, իսկ ներքի մասը, խնձորենին բարակ կը մնայ։ գերզացիք լաւ կը համարեն խնձորենին տանձենու վրայ պատռւաստել։

Խնձորենու տեսակները հայերէն ըստ չունին ինչպէս թէ հին տանձենու և թէ խնձորենու վրայ ձմեռ ժամանակ կամ մակարոյժ, չափում կոչուած բոյոր, որ անասունք կուտան։

Թթենուտ բառն ևս չեմ լսած. թէև շատ տներ ունին մաննաւոր թթենիներ, որ կը պահեն 1—2 ծառ միայն պտուղ ուտելու և տան համար շերամի բոժոք պատրաստելու համար։ Այս ևս քիչ թռւով։

Այստեղ թթենին լաւ կաճի. միջակ ծառերու կարգեն է, տերևները և թռւթը խոշոր. արմատները գետնի տակէն շատ հեռուն կը տարածէ. այնպէս որ 5—10 արտավայր եր շրջանակներն հաստ արմատներով ու մրցիքներով կը պատէ, որով գերզացու երկրագործութեան արգելք կը դառնայ, եթէ հարկ լինի թթենու շուրջը պարտէզ կամ արտ պատրաստել. շաբաթներ պիտի աշխատի, որ արմատները մաքրէ։ Կը հաստատեն թէ թթենին մի վերսուէն աւելի իր արմատները կը ձգէ. շատ անգամ քարերը կը ծակէ ու կանցնի։

Թթենու տախտակը դեղնագոյն է։

Վայրենիին տերևները աւելի լայն են քան ընտանւոյն թէև քիչ թռւով շերամ կը սնուցանեն, սակայն շատ լաւ կաճի, ընտեր սերմ կտայ։

Շերամէն մետաքս կը պատրաստեն, օրիորդաց օժիտի, քըթանէ գործուածներու մէջ կամ տնեցոց շապիքի թեղանիքնեմէջ կը հիւսեն։ Թզենին քաղաքը տան մօտ, իսկ գիւղերը տնէ թղթնուտ.՝ թզենին քաղաքը տան մօտ, իսկ գիւղերը տնէ

շատ հեռաւ, ամայի վայրեր կը տնկեն ուստի ժայռու է, այն
տեղ լաւ կաճի:

Թգենին խնձորենու չափ փոքր ծառ է, արմատը ճիւղերու
կը բաժնուի, տերեները չպատ մեծ և կաթու է, նաև հապտ ա-
թառու, երկու կտղմէն ճեղքերը ծաղիկ շտար, տերեներու ար-
մատի տակէն կոկնեներ կը զոյպնան, հետզետէ կը մեծանան,
կան որ ընկոյզէն քիչ մեծ կը լինեն, կան որ խնձորի չափ, առա-
ջին տեսակին բօրսան կ'ատեն, իսկ երկրողքին պարինան, նու-
կայ մի տեսակն ես ու: Թօրասանը կլոր ու համեղ է, պաթլի-
ճանը խոշոր ու երկարածէ՝ նոյնպէս համեղ, իսկ ուր կտերով լի-
ե անհամ:

Առաջին երկու տեսակները երբ հասունանան, տեղ տեղ
կեղեւի վրայ ճեղքուածներ կունենան, առաջ որ կանգնած էին,
այժմ գլուխնին խռնարհած ու կախուած են, գլխներէն ճիշտ
մեղսի նման ճիւթ կը հոսի, երբեմն կը կաթէ:

Թօրսանի կեղեն ևս քաղցր է, մի անդամէն մարդ ըերանը
կը դնէ ու կուտէ, պաթլիճանին ևս քաղցր է, շատեր կեղեռով
կուտեն, սակայն կեղեւը հաստ լինելուն կնուին (կեղեր վերևէն
կը հանեն), երկու-երեք անդամէն կուտեն: Տեսածէք շարան
թզեր, որք թօրսան տեսակ թգենին քաղուած ու չորացած
և շարուած են:

Թգենու փալտի մէջը դատարկ մինելուն վառելու չգար և
տերեներն ևս անասունք չեն ուտեր: Փայտը ճկուն է, չկտրիր:
Նրկան կեանք չունի: Աշնան վերջերը երբ հարաւային տաք հովը
փչէ, թզերը յանկարծ կը հասնին. Երենց կոթի վրայ կը կախ-
ուին, թոռմելու ձև ստանալով վերին առտիճանի կը համեղա-
նան, այն ժամանակ կարելի է մեծ քանակութեամբ ձեռքով
քաղել:

Զիթենուտ չկայ հայ գիւղացւոց մէջ, ձիթենին լաւ կաճի
գովելելեայ վայրեր, ուր միայն յոյներ և թուրքեր կը տնկեն,
ձիթենուտին հայեր գելրինլուխ կասեն, որպէս պաղին ևս գելրին

Շատ քիչ հայեր կան որ ձիթենիներ անկած են:

Ձիթենին միջակ և կեղեր սպիտակ ծառ է, ունի կարծը
փայտ, շատ ուշ կը մեծանայ, 10—15 տարիէն հազիւ պտուղ
կտայ, ծառի կեանքը շատ երկար է, 100—200 տարուան ձե-
թենուտներ կան: Որպէս ծառը, ճեղքերն ևս փոքր են, տերե-
ները մանր, քիչ երկարածէ և հաստ, ձմեռն ևս կանաչ: Նոր
ձիթենուտ պատրաստելու համար հին ծառներու արմատի մօտ
աճած տունկերը կը հանեն, կամ ծառի ճեղքերէն լաւերը, որ
պէտք է ունենայ բազիկ հաստութիւն, մի յարմար վայր կարդ-

կարդ կը անկէն:

Պառւղը շատ առատ է, տերեսերը՝ նոսր, տռանձին, առանձին պառւղները ամեն տերեւի տակ կերեին, նաև ծաղիկ, ապա կանանց պառւղը, ապա կարմրը, եւթ հասունանայ, կը սեանայ՝ կանանչը շատ գառն ու տախլ է:

Այս ծառն ևս ունի շատ տեսակները, խոշոր պառւղ տուղները թուով քիչ են, այնչափ յարգե չեն, միջակները գիւղացոց ուտեղիք են՝ փաքը պառւղներէն ձէթ կը հանեն մեծ քանակութեամբ, որ շատ համեզ իւղ կտայ, երբեւ իւղ կը գործածեն գիւղացիք, քաղաքացիք նաև այդ իւղով գանագան կերպակուրներ կը պատցաստեն, որ չտարրերեր կովի իւղի համէն, մանաւանդ ամեն ձկնեղենի համար միայն այդ ձէթը պիտի գործածեն:

Խափսին, որ Տրամփդօնի ծովէն (մանր ձուկ սարտինի ձկան նման) մեծ քանակութեամբ դուրս կդպի. Ձէ քաղաքացոց և թէ գիւղացոց սովորական կերպակուրն է, ընդհանրապէս ձէթով կուտեն, որով ամեն տուն ձէթ պիտի ունենայ, ինչպէս նաև կովի իւղը:

Մեծ հատելով ձիթապտուղը դեռ չհառած կանանց կանանց աղ ջրի միջ կը դնեն, ձմեռը կուտեն, նոյնպէս նաև միջակ հատերն, որոց թակով հարուած կտան (դեռ կանանց) կը ճմլեն, աղ ջրի մէջ կը դնեն, ձմեռը կուտեն: Վերջին տեսակը աւելի շուրջ գառնութիւնը գնալու և շատ ուտելու համար կանեն:

Սոյն երկու տեսակին ծակօտայ կասեն. փոքը տեսակը, որ կաղինի չափ, սակայն երկարաձև կը լինի, կայ ով իւղոտ, է. ուստի ձէթ կը պատրաստեն. կայ նաև որ երբ հասնի, աղ կը սրսկեն վրան, կուտեն երբ աղը թափանցած է մէջը, դաւնութիւնը անհետացած:

Զիթապտուղի կոփը ամուր կրպած է բողբոջներու. Խուրչաւ կով հազուած կտան, տակը կը թափեն, ապա կը ժողովեն, տան համար կը պահեն, մեծ քանակութեամբ կը վաճառեն:

Ս. Հայկացի.

(Նարունակելի):

❖